«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

2 դեկտեմբերի, 2021 թ. N 71 - Լ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 16-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության կարգավորման և հանրային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 17–րդ հոդվածի 1–ին մասի 2–րդ կետի «բ» ենթակետը, «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 26–րդ հոդվածի 1-ին մասը, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 18–րդ հոդվածի 1-ին մասը և «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) կանոնադրության 14.16.18 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Պալատի խորհրդի 2021 թվականի մարտի 31-ի N 16-Լ որոշման հավելվածում (այսուհետ՝ Հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

ա) Հավելվածի 2.1 կետում ավելացնել նոր 7-րդ ենթակետ հետևյալ խմբագրությամբ.

«7) ուսումնասիրել կազմակերպությունների (բացառությամբ՝ Պալատի) կողմից անցկացվող մասնագիտական դասընթացները, սեմինարները և այլ միջոցառումները ու որոշում կայացնել այդ դասընթացները, սեմինարները և այլ միջոցառումները որպես շարունակական մասնագիտական զարգացման միջոցառում ճանաչելու վերաբերյալ,».

բ) Հավելվածի 2.1 կետի նախկին 7-րդ ենթակետը վերահամարակալել որպես 8-րդ ենթակետ և «որակավորման» բառից հետո լրացնել «և Պալատի անդամների շարունակական մասնագիտական զարգացման» բառերով.

գ) Հավելվածի 2.2 կետի 1-ին և 2-րդ ենթակետերը ուժը կորցրած ճանաչել.

դ) Հավելվածի 4.1 կետը լրացնել հետևյալ նոր նախադասությամբ.

«Նիստերը կարող են գումարվել ինչպես Որակավորման հանձնաժողովի անդամների համատեղ հավաքի, այնպես էլ իրական ժամանակում տեսաձայնային կապ ապահովող հեռահաղորդակցական հարթակների (Zoom, Microsoft Teams, Google Meet, Scype և այլն) միջոցով:».

ե) Հավելվածի 6.2 կետում ավելացնել նոր 9-րդ ենթակետ հետևյալ խմբագրությամբ.

«9) Պալատի տնօրենի ներկայացմամբ Որակավորման հանձնաժողովի անունից հաստատում է Պալատի աուդիտորի և փորձագետ հաշվապահի որակավորման քննությունների քննական փաթեթները կազմողների, վերանայողների և քննական աշխատանքները գնահատողների ցուցակը».

զ) Հավելվածի 7.1 կետում «դեկտեմբերի» բառը փոխարինել «նոյեմբերի» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց և Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ